

— Ձգուելի՜ խաժամուժ, բի՛րտ մարդկութեան:

— Այո՛, բայց որ շատ անգամ, արդար պատուհաս մ'է նոցայ դիտուն, որ կառավարել չգիտեն: Բայց մենք ժամանակ չունինք երկար խորհրդածութեանց, զօրավար, վասնզի ո՛ր գիտէ թէ այսօր ի՛նչ կրնայ պատահիր ժողովուրդը ժողուած է Ս. Սոփիա եկեղեցին, եւ գիշեր-ցերեկ ահագին բազմութիւն մը կրկեսը եւ հրապարակները կը լեցնեն եւ սաստիկ գրգռուած են Վաղենտինոսի դէմ, վասնզի գիտեն թէ նորա ազդեցութիւն է, որ կը կառավարէ, տխմար եւ հասարակ շինական՝ ի շնորհս իւր անձնական գեղեցկութեան, այդ քու Թումայի քողը հաճոյանալով, որ տղայ կայսեր վրայ ազդեցութիւն ունէր ինչպէս նորա հօրը վրայ, հիմա կուզէ գահակից լինիլ կայսրուէան: Եգիպտոսի եւ բոլոր Ափոկիէի կորուստը սովալլուկ ըրաւ մայրաքաղաքը, եւ այս յիմար մարդը յարկ հարկի վրայ կաւելցնէ եւ իւր զօրաց թիւը կը շատցնէ: Ես, որ Մարտինէի եւ իր որդուոյն դէմ էիք հիմա այս կոշտ զինուորին դէմ պարտաւորեցայ գտնուելու:

— Բագրատունին ո՞ր է: Գրեր էիր թէ հաքսորանաց դարձի հրովարտակն առի եւ կը սպասեմ:

— Դարձաւ եկաւ, բայց դարձեալ Վաղենտինոսի ազդեցութեամբ՝ հոս մօտ Իշխանաց կղզիներն երթալ ընտանեօք քանի մը օրուան համար հրաման եղաւ: Եւ այս ինձ հարուած մ'է, վասնզի Վաղենտին հայոցմէ կը կասկածի. քու Արծափայ յաղթութեանդ լուրը եւ արաբացի նժոյգներու ընծան երբ հասան Պոլիս, ոմանց յոյս, բայց զինուորականաց շատին տհաճութիւն պատճառեց, վասնզի քանի որ այս կատաղի ժողովուրդը փրցաւ ելաւ իւր աւագներուն մէջէն եւ աշխարհիքս երեցաւ, դեռ պարտութիւն կրած չէր է ուստի այդ երկու արաբացի զօրավարաց Օթմանի եւ Օւզայի գլուխները, որ յուղարկած էիր, եւ որ ես դնել տուի կրկեսին մէջ ի տես ժողովրդեան՝ զծեր Պրոկոպիոս կատղեցուցին, եւ զինուորականք իրենց ազդեցութիւնը գործածեցին, եւ Վաղենտին հիմա ի հայոց կասկածելով, ամէն բանի մէջ նոցայ ազդեցութիւնը կուզէ ջնջել՝ ինձմէ սկսելով, որ այստեղի հայոց գլխաւորը կը համարվիմ: Այս բանիս համար պատանի կայսեր թէ լա դրեցին իմ տեղս Թումայ անուանել արեւելից զօրավար. առերեսս այնպէս ցոյց տալով, թէ կայսրը զիս անձեն չէր ուզէր բաժնել:

— Յիմա իմացայ վիճակը: Դու ի՛նչ պիտի ընես, ինչպէ՞ս պիտի գործես:

— Իմ առաջս երկու ճանապարհ կայ, եղբայր. առաջին՝ Վաղենտինի հետ ինչպէս մինչեւ հիմա վարուեցայ՝ բարեկամ ձեւանալով, կայսեր աչքը բանալ եւ վտանգը